

ԾՐԱԳԻՐ

**«ԱԿՆԱՅԻՆ ԱԽՏԱՀԱՐՈՒՄՆԵՐԸ ՇԱՔԱՐԱԽՏԻ ԺԱՄԱՆԱԿ» ԹԵՄԱՅՈՎ
 ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԵԿՕՐՅԱ ԴԱՍԸՆԹԱՑԻ**

Մայիսի 3, 2018թ., ք. Արտաշատ (Արտաշատի ԲԿ)
 Մայիսի 4, 2018թ., ք. Վեդի (Վեդու ԲԿ)
 Մայիսի 14, 2018թ., ք. Եղեգնաձոր (Եղեգնաձորի ԲԿ)

Հայկական ակնաբուժության նախագիծ ԲՀ

09:30-10:00	Մասնակիցների գրանցում, նախաթեստ:	
10:00-11:30	Տեսողական օրգանի ախտահարումը շաքարային դիաբետի ժամանակ:	Սիրանույշ Մատինյան
11:30-12:30	Դիաբետիկ ռետինոպաթիայով հիվանդների հետազոտում:	Սիրանույշ Մատինյան
12:30-13:00	Ընդմիջում:	
13:00-14:00	Մակուլային դիաբետիկ ախտահարումով հիվանդների հետազոտում, նեովասկուլյար գլաուկոմայով հիվանդների հետազոտում:	Լիլիթ Արզարյան
14:00-15:00	Մակուլյար այտուց:	Լիլիթ Արզարյան
15:00-15:30	Գրավոր թեստ:	

Թիրախային լսարան՝ ընտանեկան բժիշկներ:
 Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 70 հոգի:

Սեմինարի մաս հանդիսացող «Հիվանդների հետազոտում» սեկցիաներում նախատեսվում է զննել, հետազոտել և քննարկել մարզի ներգատաբանների կողմից ընտրված և ուղարկված համապատասխան ախտորոշումով (շաքարախտ) հիվանդներ: Իրականացվելու է ինչպես խորհրդատվության տրամադրում՝ դասընթացավարների կողմից մասնակիցներին, այնպես էլ դասընթացավարների և մասնակիցների կողմից գործիքային հետազոտությունների անցկացում: Գործիքային հետազոտություններն անցկացնելու են ՄԱԿ-ի մասնագետները և սեմինարի մասնակիցները՝ անձամբ: Հիվանդների հետազոտություններն իրականացվելու են սկզբում մասնակիցների (ընտանեկան բժիշկներ), այնուհետև դասընթացավարների կողմից՝ տվյալ բուժկենտրոնում առկա գործիքներով և սարքավորումներով: Պլանավորվում է

անցկացման վայրում առկա (հասանելի) և տվյալ հիվանդի զննման և հետազոտման համար անհրաժեշտ գործիքների և սարքավորումների կիրառում. նախատեսվում է ուղղակի օֆթալմոսկոպի և ճեղքային լամպի կիրառում: Հետազոտությունները ներառում են՝ տեսողության սրության չափում, ներակնային ճնշման չափում, բիոմիկրոսկոպիա, բիոմիկրոֆթալմոսկոպիա, բացի այդ, Արարատի մարզում կիրառվելու է Հայկական ակնաբուժության նախագիծ ԲՀ –ի Remidio ակնահատակի նկարահանման սարքը:

Յուրաքանչյուր հիվանդի (կլինիկական դեպքի) շուրջ կայանալու է դասընթացավարների և մասնակիցների միջև քննարկում, հիվանդի գանգատների և օբյեկտիվ զննման արդյունքների վերլուծություն, երկկողմանի (դասընթացավարներ-մասնակիցներ) առաջարկությունների ներկայացում և հիվանդի՝ լավագույն (օպտիմալ) բուժման պլանի մշակում՝ հիվանդի հետագա վարման նպատակով: